ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

24.07.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 590-Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔ ՎԱՐՁԱԿԱԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2025թվականի հունիսի 23-ի N 81-Ա որոշումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ամբողջությամբ դադարեցնել Սյունիքի մարզի «Գորիս քաղաքի Վազգեն Սարգսյանի անվան թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) հետագա աշխատանքների կազմակերպումը Գորիս քաղաքի Գուսան Աշոտի փողոցի թիվ 24/4/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող շենքում՝ մինչև շենքի մասով հայտնաբերված համապատասխան խնդիրների լուծումը:
2. Հաշվի առնելով այն, որ համայնքը ներկայումս չունի համայնքային սեփականություն հանդիսացող այլ շենք՝ Կազմակերպության հետագա գործունեությունն իրականացնելու համար վարձակալել Գորիս քաղաքի Օրբելյանների 18/2 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 09-003-0077-0013) գտնվող 270,7 քմ մակերեսով բնակելի տունը 6(վեց) ամիս ժամկետով՝ Կազմակերպության աշխատանքները կազմակերպելու նպատակով:
3. Ամսական վարձավճարը՝ 500000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը):
4. Հանձնարարել Կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարողին՝ Կազմակերպության անունից՝ որպես վարձակալ, Լենդրուշ Լենդրուշյանի և Արմեն Լենդրոշյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել վարձակալության պայմանագիր:
5. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2025թ. հուլիսի 24
ք. Գորիս